ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ

Կարեն Բալյան

Ցենիքս Դարբինյան

Քաղաքին ուրախություն պարգևած ճարտարապետը

BookMark

newmag
ԵՐԵՎԱՆ
2020

ՀՏԴ 72
ԳՄԴ 85.113
Բ 208

Բալյան Կ.
Բ 208 Ֆենիքս Դարբինյան. քաղաքին ուրախություն պարգևած ճարտարապետը/
Կ. Բալյան.- Եր.: Newmag, 2020.- 280 էջ:

Ճարտարապետության տեսաբան, մոդեռնիզմի պատմության մասնագետ, պրոֆեսոր Կարեն Բալյանի գիրքը նվիրված է հայկական մոդեռնիզմի կարևոր դերակատարներից մեկի՝ Ֆենիքս Դարբինյանի (1924–96) ստեղծագործությանը:

ՀՀ վաստակավոր ճարտարապետ Ֆենիքս Դարբինյանի նախագծերով և քաղաքապետ Գրիգոր Հասրաթյանի նախաձեռնությամբ արդիականացվել է Երևանի կենտրոնը, կառուցվել՝ «Անի» հյուրանոցը, վերակառուցվել՝ Աբովյան փողոցի՝ Թումանյան և Մոսկովյան փողոցների միջև ընկած հատվածը, Օղակաձև զբոսայգին Մեծ շատրվանով:

Գրքում մանրամասն ներկայացված է վաստակաշատ ճարտարապետի ստեղծագործական ամբողջ ժառանգությունը՝ ժամանակաշրջանի համատեքստում: Ճարտարապետի անձնական արխիվից մեծաքանակ նյութեր, գծագրեր ու լուսանկարներ տպագրվում են առաջին անգամ:

Գիրքը հրատարակվել է «Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամի նախաձեռնությամբ:

ՀՏԴ 72
ԳՄԴ 85.113

ISBN 978-9939-884-18-9
Կարեն Բալյան «Ֆենիքս Դարբինյան. քաղաքին ուրախություն պարգևած ճարտարապետը» © 2020

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին և «Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամին:

«Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամը ստեղծվել է 2018 թվականի փետրվարին՝ անվանի ճարտարապետ, պետական և հասարակական գործիչ Գրիգոր Հասրաթյանի և անվանի գիտնական, քաղաքագետ, պետական գործիչ Միքայել Մինասյանի հիշատակին:

Հիմնադրամի «Հասրաթյան» մատենաշարը նվիրված է 20-րդ դարի հայ ճարտարապետությանը և կերպարվեստին: Մատենաշարը հայ և միջազգային հանրությանը ներկայացնում է 20-րդ դարի հայ կերպարվեստի և ճարտարապետության մեջ մեծ հետք թողած արվեստագետների և ճարտարապետների ստեղծագործական ժառանգությունը:

Բովանդակություն

	Նախաբան. Մեկ քաղաքի ճարտարապետը	9
I	Վաթսունականցիները	13
	Ընտանիքը	20
II	Ճարտարապետությունը մինչև «Զնհալի» ժամանակները	23
	Գրիգոր Աղաբաբյան	27
	Երկու ընկեր	32
III	Շուկա. հայկական արտ-դեկո	35
	Գևորգ Թամանյանի արվեստանոցը	43
IV	Կիևյան փողոց	55
V	1950-ականների շրջադարձը. «Զնհալ»	63
	Ինստիտուտ՝ մայրաքաղաքի նախագծման համար	78
	«Զնհալի» նշանները	86
VI	Ժողտնտեսության ցուցահանդեսի փորձարարական հարթակը	91
	Ազատ տարածություններ և ձևեր	111
	«Փորձնական» նախագիծը	124
VII	Նախագիծ 2750	131

BookMark

VIII Քաղաքի գլխավոր փողոցը 145
Աբովյան փողոցի արդիականացումը 155
Սայաթ-Նովայի պողոտան 169
«Անի» հյուրանոցը 176

IX Օղակաձև զբոսայգին 187
Բնակելի տուն Սայաթ-Նովայի պողոտայում 202
Եղեռնի հուշահամալիրի մրցույթը 210

X Մարմնամարզիկների դպրոցն ու հուշարձանները 213
Հուշարձաններ 221

XI Մետրոն 227

XII Ֆենիքս Դարբինյանի ճարտարապետությունը
հայկական երկրորդ մոդեռնիզմի համատեքստում 249

XIII Վերջին գլուխգործոցը. Մեծ շատրվան 259

XIV Ֆենիքս Դարբինյանի ժառանգությունը 269

Ծանոթագրություններ 271

Լուսանկարների հեղինակներ 274

BookMark

Նախաբան

Մեկ քաղաքի ճարտարապետը

Ֆենիքս Դարբինյանի բոլոր շինությունները կառուցված են Երևանում: Քաղաքամայր Երևանի կենտրոնը ծովի մակերևույթից մոտավորապես 1000 մետր բարձրության վրա է, իսկ բարձրությունների տարբերությունը Հրազդանի կիրճի հատակից մինչև հյուսիսային սարահարթերը՝ մոտ 500 մետր:

Երևանն իր ամբողջ տարածքով բաց է Արարատի առաջ: Այն հարաբերական բարձրությամբ՝ ստորոտից մինչև գագաթ, աշխարհի մեծագույն լեռն է՝ ավելի քան 4300 մետր տարբերությամբ: Եվ դեպի այս ուղղաձիգը Երևանից վեհասքանչ տիեզերական հեռանկար է բացվում: Մերօրյա Երևանի գլխավոր հատակագծի հեղինակ ակադեմիկոս Թամանյանը մայրաքաղաքի քաղաքաշինական գլխավոր գաղափարը համարում էր քաղաքի ու լեռան՝ գործող օրգանիզմի և հավերժության մեջ քարացած ազգային լանդշաֆտի միասնության ապահովումը: Թամանյանի գաղափարի համաձայն՝ Արարատի գլխավոր համայնապատկերը պետք է բացվեր մայրաքաղաքի կենտրոնական հրապարակից: Ստալինյան ամբողջատիրական համակարգը ոչնչացրեց այդ հեռանկարը՝ փակելով դեպի լեռը եղած փեղկը: Սակայն 1960-ականների «Ձնհալի» շրջանում ճարտարապետները վերադարձան Թամանյանի գաղափարներին, և Արարատն ու ազգային լանդշաֆտը հայտնվեցին նոր ճարտարապետության առանցքում:

Ֆենիքս Դարբինյանը նախագծել և կառուցել է Երևանի տարբեր հատվածներում, նրա բարդ տեղանքի տարբեր տեղամասերում՝ Արարատյան դաշտի հարթության, կենտրոնական պողոտայի վրա, Հրազդանի կիրճում: Եվ, իհարկե, մայրաքաղաքի կենտրոնում՝ Օպերայի հրապարակում, թամանյանական գլխավոր տարածքներում՝ Օղակաձև զբոսայգում, քաղաքի գլխավոր՝ Աբովյան փողոցում, Սայաթ-Նովայի նոր պողոտայում:

40 տարվա ընթացքում նա տարատեսակ շինություններ է կառուցել՝ տիրապետելով տարբեր տիպի կառույցների՝ բնակարանից մինչև բնակելի շենքի, նախագծման տեխնիկային: Նախագծել է ամբողջական փողոցներ (Կիևյան և Աբովյան փողոցների կառուցապատումը): Նա փոքրիկ մի սրճարան է նախագծել գետափին՝ նրբագեղորեն այն ներառելով կիրճի բարդ ռելիեֆի մեջ, և մայրաքաղաքի ամբողջ կենտրոնի մասշտաբով քաղաքաշինական մեծ խնդիր լուծել (Օղակաձև զբոսայգու նախագիծը): Նրան հավասարապես հեշտ էին հաջողվում թե՛ գեղարվեստական շատրվանի, թե՛ մետրոյի կայարանով հանդերձ տրանսպորտային բարդ հանգույցի ստորգետնյա ուրբանիզացիայի լուծումները: Նա կառուցել է բազմահարկ հյուրանոց, ցուցասրահներ, նախագծել է մարզահամալիրը: Ընդ որում, համագործակցել է քանդակագործների և մոնումենտալիստների հետ, և ինքն էլ իր հերթին ստեղծել նրբագեղ գեղարվեստական հորինվածքներ:

* * *

Քառասունից մի փոքր անց էի, երբ Մոսկվայում դոկտորական ատենախոսության վրա աշխատելուց հետո վերադարձա Երևան: 1996 թվականի ամառն էր. պատերազմը Հայաստանում ավարտվել էր, Ռուսաստանի հարավում՝ Չեչնիայում, դեռ շարունակվում էր: Դրանք առավելապես գոյատևելու, ոչ թե գիտությամբ զբաղվելու տարիներ էին: Ես Մոսկվայի մետրոյի կայարաններից մեկի հարևանությամբ առևտրային տարածքների նախագծման փոքր պատվեր էի ստացել, ինչի շնորհիվ հաջողվեց մի քիչ փող վաստակել՝ ծնողներիս մոտ՝ Հայաստան մեկնելու համար:

Ժամանելուս հաջորդ օրը զանգահարեցի Հայաստանի ճարտարապետների միություն՝ իմ մասին հիշեցնելու նպատակով: Քարտուղարն ասաց, որ այդ օրը Ճարտարապետի տանը վերջին հրաժեշտն են տալու Ֆենիքս Դարբինյանին...

Գոգայի (մտերիմներն այսպես էին անվանում Գեորգիին)՝ Ֆենիքս Դարբինյանի կրտսեր որդու հետ ընկերացել էի 1960-ականների վերջին Երևանի ճարտարապետի տանը, որտեղ հաճախում էինք նկարչության դասերի՝ պատրաստվելով ճարտարապետական ֆակուլտետի ընդունելության քննություններին: Ես սկսեցի հաճախ լինել նրանց տանը՝ երևանյան հայտնի ճարտարապետ Ֆենիքս Դարբինյանի բնակարանում: Այն գտնվում էր Երևանի կենտրոնում, երկու գլխավոր փողոցների խաչմերուկում, իսկ պատուհանից բացվում էր բազմահարկ հյուրանոցի և դրա հարևանությամբ գտնվող հինգհարկանի շենքի կողաճակատի քարե գեղեցիկ պաննոյի տեսարանը: Այդ ամենը կառուցված էր Ֆենիքս Դարբինյանի նախագծերով:

Նա բարձրահասակ, բարի ժպիտով և շատ հանդարտ շարժումներով մարդ էր: Աշխատելիս ակնոց էր դնում, որը հաճախ կորբյուզիեավարի բարձրացնում էր լայն ճակատից վեր: Անչափ համեստ մարդ էր: Հիսունին մոտ էր, ինչպես հայրս, երկուսն էլ ծնվել էին 1924 թվականին Երևանում և լավ էին ճանաչում միմյանց: Այդ սերնդի ներկայացուցիչներից շատերի գործունեության ամենաբեղմնավոր շրջանը համընկավ 20-րդ դարի 1960-ականների հետ: Խորհրդային մշակույթի պատմության մեջ հայտնվեց «վաթսունականների սերունդ» կամ «վաթսունականցիներ»[1] հասկացությունը:

[1] «Վաթսունականցիներ» եզրույթը հայտնվելու տարեթիվը հայտնի է ամենայն ճշգրտությամբ: «Յունոստ» հանդեսի 1960 թվականի դեկտեմբերյան համար: Ստանիսլավ Ռասադինի «Վաթսունականցիներ: Գիրք երիտասարդ ժամանակակցի մասին» հոդվածը: (Ծանոթագրությունները՝ հեղինակի):



I

Վաթսունականցիները

Ֆենիքս Դարբինյանը խորհրդային մտավորականների «վաթսունականցիների» առաջին սերնդից է: «Վաթսունականցիները» բանաստեղծներ ու գրողներ էին, գիտնականներ, նկարիչներ, երգահաններ. նրանք նաև ճարտարապետներ էին: «Վաթսունականցիները» նրանք էին, ովքեր հավատացին «մարդկային դեմքով սոցիալիզմ» ստեղծելու խորհրդային մոդելի հնարավորությանը: Այն բանից հետո, երբ Խրուշչովը 20-րդ կոմունիստական համագումարի ժամանակ զեկուցեց Ստալինի անձի պաշտամունքի մասին՝ իրականացնելով իր թերևս գլխավոր քաղաքական քայլը, «վաթսունականցիները» ստեղծեցին նոր խորհրդային մշակույթ՝ հիմնված նախ և առաջ համամարդկային մարդասիրական սկզբունքների վրա:

Նրանց անուններն են Տվարդովսկի, Սոլժենիցին, Եվտուշենկո, Սախարով, Ալիխանյան եղբայրներ, Սևակ... ցուցակը երկար է:

Ընդ որում, «վաթսունականցիները» փոքրամասնություն էին կազմում խորհրդային մշակույթի գործիչների հսկայական բանակում, որը դաստիարակված էր ստալինյան ամբողջատիրության «Համառոտ դասընթացի» սկզբունքներով: Ստալինյան մարտնչող մեծամասնությունը շուտով հաղթեց անհնազանդ, ազատատենչ ազատականներին, բայց «վաթսունականցիների» իդեալները, որ գեղարվեստական ձև էին ստացել նրանց ստեղծագործություններում, պահպանեցին իրենց ուժը և իրենց դերը խաղացին երկու տասնամյակ անց՝ արդեն գորբաչովյան վերակառուցման տարիներին: Վերջինս վերջնական դատավճիռ կայացրեց խորհրդային բռնի համակարգին:

Վաթսունականների սերնդի ազատության գաղափարները ձևավորվեցին որպես մեծ պատերազմում տարած հաղթանակի արդյունք: «Վաթսունականցիներից» շատերը պատերազմի մասնակիցներ էին: Մյուսները, որ ավելի երիտասարդ էին, անձնապես ապրել էին տարհանումը կամ զավթիչների բռնությունների դաժանությունները: «Վաթսունականցիներից» շատերը ստալինյան բռնությունների զոհերի զավակներ էին:

Սահմանելով «վաթսունականների սերունդ» հասկացությունը՝ Դմիտրի Բիկովը հղում է անում հայտնի գրականագետ Մարիետա Չուդակովային[1], որը նշում էր այդ սերնդի գլխավոր հատկանիշները. « ... դրանք 1918-35 թթ. ծնված մարդիկ են... իշխանության հետ օրինական համագործակցության հակված մարդիկ... դրանք կոմիսարների զավակներ են, և կոմունիստական պատրանքները նրանց համար համեմատաբար երկար են արդիական մնում»[1]:

[1] Մարիետա Չուդակովան խորհրդային ճարտարապետական ավանգարդի, այդ թվում և՝ հայկական, կարկառուն հետազոտող Սելիմ Խան-Մագոմեդովի քույրն է:

BOOKLET

• Ճարտարապետներ Ֆենիքս Դարբինյան, Ջիմ Թորոսյան, Սուլթանիկ Արևշատյան, Լևոն Գևորգյան, Նինա Վասիլևա, 1968:

• Հայ ճարտարապետներն ու հնագետները Լճաշենի հնավայրի պեղումներում: Աջից երրորդը՝ Ֆենիքս Դարբինյան, 1958: